




ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ

(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

21. ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

(Մարկ. Դ 1—9)

- Դ 1 Նորից նա սկսեց ուսուցանել ծովե-
կերքի մոտ, և նրա շուրջը խոնվեց բա-
զում ժողովուրդ, այնպես որ նա մտավ
ու նստեց մի նավակի մեջ, ծովի վրա,
մինչ ամբողջ ժողովուրդը ծովեկերքին
շուրջանակի բռնել էր ցամաքը:
- 2 Եվ նա առակներով նրանց շատ բան
էր ուսուցանում և նրանց ասում իր
վարդապետության մեջ.
- 3 «Լսեցե՛ք, ահավասիկ մի սերմանող սեր-
մանելու ելավ:
- 4 Եվ պատահեց, որ սերմանելու ժամա-
նակ սերմի մի մասն ընկավ ճանապար-
հի եզերքը, և թռչունը եկավ ու կերավ
այն:
- 5 Ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա,
որտեղ շատ հող չկար. և շուտով բու-
սավ, որովհետև հողը հյութ չուներ:
- 6 Բայց երբ արևը ծագեց, խանձվեց. և
քանի որ արմատներ չուներ, չորացավ:
- 7 Մի ուրիշ մաս ընկավ փշերի մեջ. փշե-
րը բարձրացան և խեղդեցին այն, և
պտուղ չտվեց:
- 8 Իսկ մի ուրիշ մասն էլ ընկավ լավ հողի

Michel Quesnel Comment lire un évangile

Saint Marc

aux Éditions du Seuil, Paris

* Հարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվա-
կանի № № Բ—Դ-ից:

վրա, բուսնելով աճեց ու պտուղ տվեց, մեկի դիմաց՝ երեսուն, և մեկի դիմաց՝ վաթսուն, և մեկի դիմաց՝ հարյուր»:

9 Եվ նա ասում էր. «Ով որ լսելու ականջ ունի, թող լսի»:

Ծովեպեղք, հոծ ամբոխ, մի նավակ, որի մեջ մտնում-նստում է Հիսուս: Մարկոսն արդեն պատկերել է այս տիպի մի տեսարան (Մարկ. Բ 1—13 և Գ 7—12): Ամբոխի վերաբերմունքն այժմ թվում է նվազ հարձակողական, քան եղել է անցյալում: Մթնոլորտի լարվածությունը թուլացել է: Հիսուս ուսուցանում է նստած, ինչպես անում էին ռաբբիներն ու քարոզիչները ժողովարաններում: Կարելի է մտքով պատկերացնել, որ նավակը կառանված է մի փոքրիկ ծովախորշի կենտրոնում, իսկ ամբոխը խմբված է ծովափին՝ կամարաձև մի շրջանակ կազմած: Տիրոջ և ամբոխի միջև մի որոշ տարածություն կա, բայց ոչ շատ մեծ: Ունկնդրելու համար պայմանները լավ են, և դա թվում է կարևոր: Պատմել սկսելուց առաջ Հիսուս հրավիրում է իր ունկնդիրներին լինել ուշադիր՝ ասելով. «Լսեցե՞ք» (համար 3): Իսկ երբ վերջացնում է իր խոսքը, նորից է անդրադառնում ունկնդրության որակին՝ ասելով՝ «Ով որ ականջ ունի լսելու, թող լսի» (համար 9):

Հիրավի, պատմված առակը կարող է հասկացվել տարբեր մակարդակներով: Կարճամիտ ունկնդիրները այդ պատմությունից կհասկանան միայն այն, ինչ բոլորն են հասկանում, այսինքն թե՛ լավ հողն է միայն պտուղ տալիս: Ճանապարհը, քարքարոտ վայրերը և փշերը, տարբեր պատճառներով, բերք չտվող հողամասեր են: Հիսուս այս դեպքում պարզապես հիշեցնում է այն, ինչ ամեն երկրագործ գիտի իր փորձառությունից:

Եվ սակայն, առակում ուրիշ բաներ էլ են ասված, որ ընդունակ են ընկալելու նրանք, ովքեր իրենց ականջների ծայրից մի քիչ ավելի հեռուն են լսում: Պատմված առակը խոսում է հողի մասին, որտեղ սերմանվում է սերմը, և ուղղված է մի բազմության, որ նստած է գետին, հողի վրա և ընդունում է Հիսուսի խոսքը: Ունկնդիրներից ոմանք ի վիճակի չե՞ն միթե հասկանալու, որ որոշակիորեն իրենց պատմվում է այն, ինչ իրենք ապրում են այդ պահին: Հիսուս սերմի անունը չի տալիս. առակը բովանդակում է մի չասված բան, որ հենց առակի բանալին է հանդիսանում: Տվե՛ք սերմին մի անուն, և դուք կտեսնեք բոլորովին այլ բան, քան գեղջկական կյանքի մի տափակ պատմություն:

Այսպիսին է սերմնացանի այս առակը, և այսպիսին են մյուս առակները, որոնք հաջորդելու են սրան: Մի պատմություն է պատմվում. դա այն է, ինչ երևում է, բայց այդ պատմությունը ավելին է ասում, քան պատմվածը, այն ականջների համար, որոնք բացված են լսելու ա՛յլ կարգի իրողություններ:

Եվ յուրաքանչյուր ոք հրավիրվում է վերցնելու դրանցից այն, ինչ կարող է ստանալ:

22. ՄՇԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՍԻ ՄԱՐԴԻԿ (Մարկ. Դ 10—12)

Դ 10 Երբ նա առանձին մնաց, նրա շուրջը եղողները, աշակերտների հետ միասին, հարցրին նրան առակների մասին:

11 Եվ նա ասաց նրանց. «Ձեզ է տրված իմանալ Աստուծո արքայության խորհուրդները, բայց նրանց համար, որ ձեզնից դուրս են, ամեն ինչ առակներով կլինի,

12 որպեսզի տեսնելով տեսնեն ու չտեսնեն և լսելով լսեն ու չիմանան, որ մի գուցե երբեք դարձի գան, և իրենց ներվի»:

Չարմանալի է և նույնիսկ գայթակղեցուցիչ Հիսուսի այս բացատրությունը: Առակները հաճախ նկատվում են որպես մանկավարժական մի միջոց՝ հասկացնելու, ունկնդիրներին հասու դարձնելու համար դժվարիմաց մի ուսմունք, իսկ Մարկոսը բոլորովին հակառակն է ասում. այսինքն՝ առակները ներկայացնում են դիտավորյալ կերպով գործածված խրթին մի լեզու «նրանց համար, որ դրսում են»: Միայն ընտրյալների մի փոքր խմբին է իրավունք տրվում մուտք գործելու «Աստուծո թագավորության խորհրդի» մեջ: Եսայի մարգարեից կատարված այս մեջբերումը, որը դրված է Հիսուսի բերանը, թվում է, թե շատ ավելի հեռու է զբնում բացառման կամ մերժման իմաստով. պետք չէ, որ դրսի մարդիկ դարձի գան, և նրանց ներվի:

Ինչպե՞ս հասկանալ այսպիսի խստություն Հիսուսի կողմից, որն իրավամբ հայտնել էր իր մասին, թե «եկել է կանչելու մեղավորներին» (Մարկ. Բ 17):

Երկու կարգի խորհրդածություններ կարող են օգնել մեզ այս հարցում: Այդ խորհրդածություններն իհարկե տվյալ խոսքից լրիվ չեն վերացնի նրա գրգռիչ կամ նույնիսկ գայթակղեցուցիչ կողմը, բայց կարող են միջոց ծառայել հարցին ներքուստ մոտենալու համար: Ի վերջո, միգուցե այնքան էլ վատ չէ, որ ավետարանի մի հատված

ամբողջապես շուռ տա մեր պատրաստի գաղափարները Հիսուսի մասին:

Ամենից առաջ պետք է հիշել, որ Մարկոսի ավետարանը, գրված շուրջ 65 թվականին Հռոմում, ուղղված է հալածաբանների ենթարկված քրիստոնյա մի համայնքի. Ներոնի հալածաբանները շատ մոտ էին, իսկ հաջորդներն էլ հեռու չէին: Նման մի մթնոլորտում Եկեղեցու կյանքի համար անհրաժեշտ էր ունենալ երկու տիպի լեզու, երբ խոսքն ուղղվում էր ներսի մարդկանց, կարելի էր խոսել պարզ ու հասարակ, բայց և հարկավոր էր պոուշանալ այն ամենից, որ կարող էր դուրս թափանցել և վտանգի տակ դնել քրիստոնյաների կյանքը: Հալածված խմբի խորհուրդները կամ գաղտնիքները ծայրահեղ պոուշավորությամբ վերապահվում էին գիտակ մարդկանց այն մտավախությամբ, որ դրանք, հրապարակվելով, կարող էին ծառայել որպես զենք հալածիչների համար:

Արդ, ըստ Մարկոսի, գրեթե նույնանման կացության մեջ է գտնվում Հիսուս: Նրան սպանելու որոշումն արդեն ընդունված է փարիսեցիների և հերովդեսականների կողմից (Մարկ. Գ 1—6): Բազմությունները դրսևորել են անհասկացողություն և հարձակողական տրամադրություններ: Հիսուսի մերձավոր ազգականները փորձել են գնալ-վերցնել նրան: Կացությունը իրոք որ վտանգավոր է: Որպեսզի Աստուծո թագավորության քարոզությունը հնարավոր լինի շարունակել, անհրաժեշտ է ապահովել ամենից ավելի համոված մարդկանց պաշտպանությունը:

Մի՛ տվեք սրբությունը շներին.

Ձեր մարգարիտները խոսքերի առաջ մի՛ գցեք,

ասում է Հիսուս մի ուրիշ ավետարանում (Մաթևոս, Է 6): Աշակերտների խումբը, ինչպես է Հռոմի Եկեղեցին, որին դիմում է Մարկոսը, ստիպված է գործել մեծ պոուշությամբ: Պետք չէ ամեն ինչ անհրաժեշտաբար ասել ամենքին:

Երկրորդ՝ մի հստակ հայացք հենց այն շառերի վրա, որ գործածում է Հիսուս, կարող է նույնպես օգնել հասկանալու այն նտադրությունը, որ Մարկոսը վերագրում է յրան: Հիսուս Հին Կտակարանից և մասավորապես Եսայու գրքից մեջ է բերում մի ատված, որ արժե կարդալ մինչև վերջ: Նախ խոսում է Աստված. մարգարեն պառասխանում է նրան.

«Եվ նա ասում է.

Ինձ՝ և ասա՛ այն ժողովրդին.

«Լսելով կյսեք և չեք հասկանա,

Տեսնելով կտեսնեք և չեք գիտենա»:

Քանզի խստացավ սիրտն այդ ժողովրդի.

Խլացրին ականջներն իրենց

Եվ աչքերն իրենց փակեցին,

Որ երբեք չտեսնեն աչքերով

Եվ չյսեն ականջներով

Ու չիմանան իրենց սրտով,

Դարձի չգան ու չբժշկեմ նրանց»:

Եվ ես ասում եմ. «Մինչև ե՛րբ, Տե՛ր իմ»:

Եվ նա ասում է.

«Մինչև ավերվեն քաղաքներն ու դառնան անբնակ,

Ավերվեն տներն ու դառնան անմարդ,

Եվ մնա երկիրն ավերակ»:

Ապա Աստված այդպես կշարունակի անել մարդկանց.

Կբազմանան մնացածները երկրում,

Բայց եթե մնա նրանց մեկ՝ տասներորդն անգամ,

Դարձյալ կմատնվեն գերության ու

համիշտակության.

Ինչպես կտրված կաղնի կամ բնեկնի,

Որից մի բուն է մնում միայն,

Եվ այդ բունը սուրբ ծնունդն է նրա :

(Եսայի Զ 9—13)

Այս տեքստը գրվել է Քրիստոսից առաջ 740 թվականին: Ասորեստանցի ներխուժողները մոտեցել են Երուսաղեմի դռներին: Եսային առաքելությամբ ուղարկվել է քաղաքի բնակիչների մոտ, որոնք տառապում են քաղաքում կատարվող անարդարություններից: Ոչ ոք մտահոգված չէ վերահաս վտանգով, որն սպառնում է բոլորին: Ընդհակառակն, ամեն մարդ աշխատում է առավելագույնս օգտվել այդ անկայուն դրությունից՝ փող կուտակելու համար ամենախեղճ մարդկանց հաշվին:

Այն խոսքերը, որ մարգարեն պիտի արտասանի, չափապանց խիստ են: Ժողովուրդը իր այդ ընթացքով իր սեփական կործանումն է պատրաստում: Անօրինություններն այնքան են խորացել, որ անհնար է ետ դառնալ: Քաղաքի կողոպուտը, երկրի ավերումն ու բնակիչների տեղահանությունը անխուսափելի են:

Ճիշտ է, որ Եսայու մարգարեությունից մեջբերված հատվածի վերջին նախադասությունը հուսադրիչ մի խոսք է: Ուրիշ բան չի մնալու այդ երկրից, այլ միայն մի խանձված կոճղ, նման տապալված և կրակից լափիված մի մեծ ծառի բնի: Եվ սակայն, «բունը նրա սուրբ ծնունդն է»: Եսային այստեղ ներմուծում է մարգարեների քարոզության մեծ թեմաներից մեկը. Իսրայելը պիտի կործանվի իր-իսկ մեղքով, բայց պի-

տի պահպանվի մի մնացորդ, մի փոքր սերմ հողի մեջ նետված, որտեղից ծիլ պիտի արձակի ինչ-որ նոր բան, որը թույլ պիտի տա, որ կործանումից այն կողմ էլ շարունակվի Աստուծո զաջինքը իր ժողովրդի հետ:

Մարկոսը Հիսուսի քարոզությունը վերագրում է մարգարեական այս մեծ ավանդության մեջ: Փարիսեցիները մոլորված մնացել են իրենց մերժման մեջ, նույնպես և բոլոր նրանք, որոնց ավետարանիչը կոչում է «դրսի մարդիկ»: Առայժմ նրանցից ոչ մի հույս չկա: Միայն աշակերտների խումբը, որոնց հոգիները ինչ-որ չափով բաց են Բարի լուրի առջև, ի վիճակի են ապրելու հավատի արկածախնդրությունը. այդ խմբի վրա է հենվում Աստուծո Թագավորության ապագան:

Այսպես, Ավետարանի տարածման գործը պիտի շարունակվի աշակերտների և «դրսի մարդկանց» միջև գոյություն ունեցող լարվածության պայմաններում: Սակայն հարկավոր է ուշադիր լինել՝ չաղավաղելու համար գործող անձանց դիմանկարը: «Դրսի մարդիկ» իրականում պիտի մնան որպես ծանր բեռ կամ նույնիսկ հայտնապես պիտի հակադրվեն Բարի լուրի առաջընթացին: Բայց տասներկուսը կամ աշակերտներն էլ, նրանց հակառակ, ո՛չ հերոսներ են և ո՛չ էլ կատարյալ, օրինակելի անձինք: Ավետարանի շարունակությունը մեզ ցույց պիտի տա, թե նրանք շատ սովորական, տատանվող մարդիկ են: Նրանք պարզապես Հիսուսի նկատմամբ ունեն ոչ որոշակի դրական և բարյացակամ վերաբերմունք: Որպես այդպիսիք, նրանք ստացել են նրանից քարոզելու առաքելություն, որը պիտի փորձեն ի գործ դնել՝ լավ կամ վատ: Մարկոսի Ավետարանի առաջընթացը համեմատական է վկաների միջակության հետ: Գալով մեզ՝ ընթերցողներին, թվում է, թե մենք մերթ աշակերտներ ենք, մերթ՝ «դրսի մարդիկ»:

Քրիստոնյան միաժամանակ է՝

—Ավետարանի շարժիչը և արգելակը.

—Հիսուսի սպանիչը և օգնականը:

23. ՀԻՍՈՒՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՍԵՐՄՆԱՅԱՆԻ ԱՌԱԿԸ (Մարկ. Դ 13—20)

Դ 13 Եվ նա ասաց նրանց. «Այս առակը չե՛ք հասկանում. ապա ինչպե՛ս պիտի հասկանաք բոլոր առակները:

14 Նա, որ սերմանում է, խոսքն է սերմանում:

15 Ճանապարհի եզերքին սերմանվածները նրանք են, որոնց մեջ խոսքն է սերմանվում, երբ լսում են այն, սատանան

գալիս է և դուրս է հանում նրանց սերտերի մեջ սերմանված խոսքը:

16 Ապառաժի վրա սերմանվածները նրանք են, որ, երբ լսում են խոսքը, իսկույն ուրախությամբ ընդունում են այն.

17 և որովհետև իրենց մեջ արմատներ չունեն, այլ մի որոշ ժամանակի համար են, երբ խոսքի պատճառով նեղություն կամ հալածանք է վրա հասնում, իսկույն գայթակղվում են:

18 Իսկ նրանք, որ սերմանվեցին փշերի մեջ, այդ նրանք են, որ լսում են խոսքը.

19 սակայն այս աշխարհի հոգսերը և հարցառության պատրանքները ներխուժում և խեղդում են խոսքը, և այն անպտուղ է լինում:

20 Եվ լավ հողի մեջ սերմանվածները նրանք են, որ լսում են խոսքը և ընդունում ու պտուղ են տալիս. մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝ վաթսուն և մեկի դիմաց՝ հարյուր»:

Ուրեմն «աշակերտների հետ իր շուրջը եղողներին» է ուղղում Հիսուս իր խոսքը: Նա մի քիչ խիստ է վարվում նրանց հետ, որովհետև իրենք իրենց չեն հասկանում սերմնացանի առակը: Բայց, ինչ էլ որ լինի, նրանք իրավունք ունեն լուսաբանությունների, մի բան, որից զրկված են դրսի մարդիկ:

Մեկնությունը արտահայտված է մեկ նախադասության մեջ. «Նա, որ սերմանում է, խոսքն է սերմանում (համար 14): Սերմի էությունը բնորոշված է, թեև ոչ այնքան հստակ, որովհետև, ի տարբերություն Ղուկասի, Մարկոսը չի ասում՝ «Աստուծո խոսքը»: Առակի բանալին տրված է: Ամբողջ մնացածը կարելի է հասկանալ հենց ա՛յդ տեղից մեկնելով: Տարբեր տեսակի հողերը, որոնց մեջ ընկնում են սերմերը, ներկայացնում են խոսքն ընդունողների այլապես վերաբերմունքները՝ չարից խոցվելու ընդունակություն (համար 15), մակերեսային պատրաստակամություն (համար 16—17), տրամադրության պակաս՝ բազմալուսադրությունների հետևանքով (համար 18—19), խոսքի իսկական ընդունում (համար 20): Միայն վերջիններն են պտուղ տալիս:

Պարոնա՛յք ունկնդիրներ, քննեցե՛ք ինքներդ ձեզ: Ո՛ւմ մեջ եք ճանաչում դուք ձեզ:

24. ՃՐԱԳԻ ԱՌԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. Դ 21—23)

Դ 21 Եվ նա ասաց նրանց. «Միթե ճրագը բերվում է, որ գրվանի կամ մահճի

տա՛նկ դրվի: 24՝ որ աշտարակի վրա է դրվում:

22 Արդ, ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և գաղտնի բան չի եղել, որ ի հայտ չգա:

23 Թե մեկը լսելու ականջ ունի, թող լսի»:

Ինչպես նախորդ հատվածում, Հիսուս շարունակում է իր խոսքն ուղղել աշակերտներին՝ ամբոխից մեկուսի: Ավետարանիչը որոշակի ասում է. «Եվ նա ասաց նրանց»:

Վերևի մի քանի տողերը պարզաբանում են Հիսուսի մեթոդը, որ Մարկոսը ներկայացրեց նախապես սերմնացանի առակի կապակցությամբ (Մարկ. Դ. 1—9 և Դ. 10—12): Հիսուս նախ պատմում է մի առակ՝ ճրագի առակը (համար 21): Ապա տալիս է դրա մեկնությունը, որն սկսվում է «արդ» բառով (համար 22): Այնտեղ միայն աշակերտներն են, որ լսում են թե՛ առակը և թե՛ նրա մեկնությունը: Նրանք ձեռք են բերում մի տեսակ աշխատանոցային փորձառություն, որը սովորեցնում է նրանց տեսնել այն կապը, որ գոյություն ունի առակի ձևով պատմված մի պատմության և այն իրական կացության միջև, որին ակնարկում է այդ պատմությունը: Կենցաղային մի գործողության նկարագրության ետևում, գործողություն, որը կայանում է սենյակի մեջտեղում կենտրոնական դիրքով ձեռքի մի փոքրիկ ճրագ դնելու մեջ, սենյակը լուսավորելու համար, բացահայտվելիք մի ուսուցում կա թաքուն իրողությունների մասին, որոնք ի լույս պետք է հանվեն:

Շնորհիվ այս մանկավարժական մեթոդի, Հիսուս հույս ունի, որ աշակերտները կհասնեն այն բանին, որ այնուհետև իրենք կմեկնաբանեն առակները, առանց որ կարիք լինի առանձնապես նրանց տալու լրացուցիչ բացատրություններ: Մարկոսը նույնպես այդ բանն սպասում է իր ընթերցողներից:

Այսուհանդերձ, առակի մեկնությունը, որ տրված է այստեղ Հիսուսի կողմից, կատարելապես հստակ չէ: Հասկանալի է, որ ինչ որ թաքուն է ու գաղտնի, պետք է ի հայտ գա ամենայն պարզությամբ. բայց Հիսուս որոշակիորեն չի ասում, թե ի՛նչ իրողության մասին է խոսքը: Գուցե նրա խոսքերը դիտավորյալ կերպով անորոշ են, որպեսզի ունկնդիրն ամբողջացնի ըստ իր ըմբռնման: Այս դեպքում տրված մեկնությունը թելադրական մի բաց խոսք է:

Այն իրողություններից, որ մեզ կարող է թելադրել ճրագի առակի մեկնությունը, նըշենք այստեղ երեքը.

— Աստուծո թագավորությունը: Ներկա-

յումն այն մոտ է, առանց սակայն դրա համար տեսանելի լինելու: Այն ըմբռնվում է որպես խորհրդավոր մի իրականություն՝ սահմանված լինելով հանդերձ հայտնապես դրսևորվելու:

— Խոսքը: Այն սերմանվում է սրտերի գաղտնարանում, ինչպես հողի մեջ թաղված մի հատիկ: Եվ սակայն այն եղել է, որպեսզի առատ պտուղ տա, ինչպես իրենց ցողունների վրա շատ բարձր կանգնած ցորենի հասկերը:

— Ինքը Հիսուս: Նա նույնպես իր ինքնությունը ծածկում է որոշ գաղտնապահությամբ: Լռեցնում է դևերին, որովհետև նըրանք իր մասին շատ բան գիտեն: Նրա ինքնության վերաբերմամբ խորհրդապահություն է անհրաժեշտ, որպեսզի հավատացյալն ի՛նքը առաջ ընթանա նրա անձի հայտնաբերման մեջ: Եվ սակայն պետք է, որ նա հետպիսեռ ավելի ճանաչվի, որպեսզի աշխարհը կարողանա բացվել ճշմարիտ լույսին:

25. ՉԱՓԻ ԱՌԱՎԸ ԵՎ ՆՐԱ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. Դ. 24—25)

Դ. 24 Եվ նա ասաց նրանց. «Ձգույ՛ջ եղե՛ք, թե ինչ եք լսում, և ինչ որ լսում եք, ավելին կտրվի ձեզ. ինչ չափով որ չափում եք, նույնով պիտի չափվի ձեզ համար:

25 Արդ, ով որ ունի, նրան պիտի տրվի. իսկ ով որ չունի, նրանից պիտի վերցվի, ինչ էլ որ նա ունի»:

Միշտ իր աշակերտներին է, որ Հիսուս ուղղում է իր խոսքը: Նրա ընթացքը նույնն է, ինչ որ նախորդ հատվածում. նա մի կարճ առակ է ասում չափի առակը (համար 24), այնուհետև տալիս է մի հակիրճ բացատրություն, որի մեջ ներմուծում է «արդ» բառը (համար 25): Հիսուս շարունակում է իր աշակերտների դաստիարակությունը՝ նրանց սովորեցնելով մեկնաբանել իրենց լսած առակները:

Ներկա դեպքում, սակայն, «ինչ չափով որ չափում եք...» նախադասությունը իսկական մի առակ չէ: Ի տարբերություն նախորդների՝ սերմնացանի կամ ճրագի առակի, այս մեկը ունկնդիրներին ուղղված է հոգնակի թվի երկրորդ դեմքով և իրապես չի պանապանվում այն բացատրությունից, որը նրա շարունակությունն է կազմում: Կարելի է խոսել մի տեսակ «խառն ձև»-ի մասին, որը միջին մի ձև է պատկերավոր հորդորի և բուն առակի միջև:

Ինչ վերաբերում է տրված մեկնությանը (համար 25), այն հեռու է հստակ լինելուց:

Ի՞նչն է չափվել, տրվել և վերցվել: Այս կարճ հատվածում ի վերջո Հիսուս ի՞նչ է ուզում ասել իր աշակերտներին:

Իհարկե պետք չէ շատ ձգտել հստակացնելու այն, ինչ գրվածքում մնում է աղոտ և հետևաբար բաց՝ հնարավոր բազմաթիվ մեկնությունների համար: Այսուհանդերձ, Հիսուսի խոսքերը հետաքրքրական մի լուսաբանություն են ստանում, եթե ենթադրենք, որ բուն խնդրո առարկան, ինչպես նախորդ առակներում, խոսքն է, որը սերմանվելով մի մարդու մեջ, որ լավ է ընդունում այն, տալիս է պտուղ, սերմեր, որ կարելի է չափել՝ «երեսուն, վաթսուն և հարյուր» (Մարկ. Դ 8—20): Այս դեպքում, «ով որ ունի», թվում է՝ նա՛ է, ում մեջ խոսքը պտղավորվեց, մինչդեռ «ով որ չունի», ավելի շուտ նա՛ կլինի, ում մեջ սերմանված խոսքը մնում է անպտուղ:

«Զգույշ եղեք, թե ինչ եք լսում», ասում էր Հիսուս հատվածի սկզբում: Եթե խոսքը ձեր մեջ առատ պտուղ է տալիս, դուք շատ կստանաք Աստծուց, շատ խոսքեր, որոնք ձեր մեջ կպտղավորվեն ավելին ու թերևս նաև շատ ուրիշ բաներ: Բայց թե խոսքը տալիս է քիչ պտուղ, այն քիչը, որ դուք կունենաք, այդ իսկ ձեզ չի թողնվի: Այստեղ արդեն շատ հեռու չենք այն մտքից, որ սուրբ Հովհաննեսը հիշատակում է այգու առակում.

«Ես եմ ճշմարիտ որթատունկը,

Եվ իմ Հայրը մշակ է:

Ամեն ճյուղ, որ իմ վրա է ու պտուղ չի բերում,

Նա կտրում է այն.

Իսկ այն ամենը, որ պտուղ է բերում,

Էտում է, որպեսզի առավել ևս պտղաբեր լինի»
(Հովհ. ԺԵ 1—2)

26. ԾԼՈՂ ԵՎ ԱՃՈՂ ՍԵՐՄԻ ԱՌԱՎԸ

(Մարկ. Դ 26—29)

Դ 26 Եվ նա ասում էր. «Այսպես է Աստուծո արքայությունը. որպես թե մի մարդ հողի մեջ սերմեր ցանի.

27 և նա ննջի, թե վեր կենա, գիշեր և ցերեկ, սերմերը կբուսնեն ու կաճեն, և նա չի իմանա,

28 թե հողը ինքն իրենից պտուղ է բերում. նախ՝ խոտը, ապա՝ հասկը և ապա՝ առողջ ցորենը հասկի մեջ:

29 Սակայն երբ սերմը իր պտուղը տա, իսկույն մանգաղ է ուղարկում, որովհետև հնձի ժամանակը հասած է»:

Այս գեղեցիկ առակը չկա ուրիշ ոչ մի ավետարանում. սրան հանդիպում ենք միայն Մարկոսի մոտ: Առակն ուղղված է ժողովրդին և ոչ միայն աշակերտներին: Ավետարանիչը գրում է՝ «Եվ նա ասում էր» և ոչ թե՝ «Եվ նա ասում էր նրանց», ինչպես նախորդ հատվածներում: Նախ այստեղ պատմությունն առաջադրվում է առանց որևէ բացատրության: Սա հենց այն տիպին է պատկանում, որը սահմանված է բոլորի ուսուցմանը: «Դոսի մարդիկ» արմտիքի աճման պարզ նկարագրությունից բացի, ուրիշ ոչինչ չեն տեսնի սրա մեջ: Բայց աշակերտները, որոնց Հիսուս նոր էր սովորեցրել առակներ մեկնաբանել, հրավիրվում են այս առակի մեջ գտնելու ավելի խորունկ մի իմաստ, և ընթերցողն էլ հրավիրվում է այն դարձնելու երկրորդ աստիճանի մեկնության նյութ:

Ցանքսի, աճման և հնձի ընթացքը, որի մասին Հիսուս խոսում է, պատկերավոր կերպով ցույց է տալիս, թե ինչ է Աստուծո Թագավորությունը: Նկարագրված ամբողջ գործողությունն է, որ արտահայտում է այդ Թագավորությունը: Այն չի համեմատվել ո՛չ սերմանողի, ո՛չ սերմի, ո՛չ հողի և ո՛չ էլ հրնձի հետ: Աստուծո Թագավորությունը շատ բարդ է, որպեսզի վերածվի միայն մի տարրի: Հիսուսի բերանում և ավետարանչի գրչի տակ մենք գտնում ենք այն, ինչ հաճախ լսում ենք երեխաների մոտ, երբ նրանք իրենց ձևով տալիս են որևէ բանի սահմանումը: Օրինակ՝ վրիպումը կամ մոլորությունն այն է, երբ մարդ սխալվում է... Ստախոսը այն մարդն է, որը ճիշտը չի ասում... Նույն ձևով Հիսուս բացատրում է՝ Աստուծո Թագավորությունը այն է, որպես թե մի մարդ սերմ ցանի. և նա քնի թե վեր կենա, սերմը կծի ու կաճի... և այլն: Գուցե հենց այս ձևով է, որ առակների լեզուն հաճախարհային է դարձել: Նրա մեջ վերացական սահմանումներից ոչինչ չկա: Այդ լեզուն խոսում է բոլորին: Այն մասնավորապես հարմար է հասկանալի դարձնելու համար այնպիսի հարուստ մի իրողություն, ինչպիսին Աստուծո Թագավորությունն է:

Դաստիարակված լինելով մեկնաբանման այն մեթոդով, որ Հիսուս տվեց իր աշակերտներին՝ նախորդ հատվածներում, կարո՞ղ ենք արդյոք մի մեկնություն տալ այս առակին: Նայած թե պատմված պատմության ո՞ր կետի վրա է դրվում շեշտը, ըստ այնմ էլ մղվում ենք անել այս կամ այն մեկնությունը: Երկու գլխավոր մեկնություններ ենք տեսնում այս առակում, ինչ որ չի նշանակում, թե հնարավոր մի երրորդ կամ չորրորդ մեկնություն չկա:

Առաջին մի բացատրություն դժվար չի լինի գտնել, եթե, որպես վերծանման բանալի, վերցնենք այն, ինչ նկատի ունեցանք նախորդ առակների համար. **սերմանվածը խոսքն է:** Հապա ո՞վ է մարդը: Պատմության վերջում նա հունձ է անում: Արդ, առակների մեջ հունձը հաճախ ներկայացնում է դատաստանը, որին պիտի ենթարկվեն մարդիկ «ի լրումն ժամանակաց»: Ավետարանական ավանդության մեջ այդ դատաստանին նախագահում է Հիսուս: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, թե ինչ է ասված մարդու մասին 27-րդ համարում. նա քնում է ու վեր կենում: «Վեր կենալ» բառը մեկն է Նոր Կտակարանում գործածված բառերից՝ նշելու համար Հարությունը (հունարենում գոյությունն չունի «հարություն առնել» բառը: Հիսուսի Հարության մասին խոսելիս աստվածաշնչական հեղինակներն ասում են՝ «վեր կացավ» կամ «արթնացավ»): Ինչ վերաբերում է քնելու պատկերին, Աստվածաշնչում այն հաճախ գործ է ածվել՝ նշելու համար մահը:

Սույն առակի վերաբերյալ հնարավոր է նաև անել մի ամբողջ մեկնություն՝ սերմնացանին նույնացնելով Հիսուսի հետ. Հիսուս սերմանեց խոսքը, ապա մեռավ և այնուհետև հարություն առավ, բայց խոսքը շարունակում է աճել մարդկանց սրտերում և պլուտող է տալիս: «Ի լրումն ժամանակաց» նույն Հիսուսը գալու է դատելու մարդկանց, քաղելու խոսքի պտուղները՝ ինչպես մի մրջյակ, որ հունձ է անում:

Աստուծո թագավորությունը, ուրեմն, մտածել է տալիս, թե ինչ է տեղի ունենում աշխարհում Հիսուսի Հարությունից հետո. պիտի լինի աճման մի շրջան և ապա հնձի մի շրջան:

Այս առակի մեկնությունը, որն անշուշտ մի քիչ դժվար է, անկասկած մեկն է այն մեկնություններից, որ անում էր քրիստոնյա համայնքը, որի ծոցում ապրում էր սուրբ Մարկոսը Հռոմում մեր թվագրության շուրջ 65 թվականին:

Բայց միևնույն ժամանակ կարելի է պարզապես զգայուն լինել հակադրություն ներկայացնող այն մթնոլորտի նկատմամբ, որը բխում է Հիսուսի կողմից տրված նկարագրությունից: Այդ դեպքում այնքան էլ կարեւոր չէ, թե ով է մարդը, և ինչ է սերմանվածը. մարդը ապրում է, գիշերներն ու ցերեկները հաջորդում են միմյանց, արտատվոր մի աշխատանք է կատարվում իրողի մեջ՝ առանց որ մարդը իրապես մասնակցի դրան և առանց որ նա գիտենա, թե ինչպես է տեղի ունենում այդ աշխատանքը: Մի խորին խորհուրդ կա այդ աճման մեջ: Հակադրու-

թյունը անչափ մեծ է բնության կատարած վիթխարի աշխատանքի և մարդու կատարածի միջև, որը հապիվ է մասնակցում դրան և գրեթե ոչինչ չի ըմբռնում կատարվող աշխատանքից:

Այսպիսին է նաև Աստուծո թագավորությունը. այն իրական է, այն անսահման է, այն ամենագործուն, ամենակենսական բանն է, որ կա աշխարհում: Իսկ մարդը շատ չընչին մի բան է նրա բաղդատմամբ և հապիվ կարողանում է ըմբռնել այն:

Այսպիսի մի մեկնության մեջ դժվար է տեսնել, թե ինչի է համապատասխանում առակի վերջում նկարագրված հունձը (համար 29): Բայց այս մեկնությունը թույլ է տալիս մեզ մի գեղեցիկ մոտեցում ունենալ Աստուծո թագավորությանը. այն լույսի թագավորություն է, եթե մենք նույնիսկ նրա սովերեններն ենք նշմարում միայն, կյանքի թագավորություն, եթե մենք նույնիսկ նրա նինջն ենք նշմարում միայն:

27. ՄԱՆԱՆԵՆԻ ՀԱՏԻԿԻ ԱՌԱՎԸ (Մարկ. Դ 30—32)

Դ 30 Եվ նա ասում էր. «Ինչի՞ նմանեցնենք Աստուծո արքայությունը, կամ ի՞նչ օրինակով ներկայացնենք այն.

31 նման է մանանեխի հատիկին, որը երբ սերմանվում է հողի մեջ, ավելի մանր է լինում, քան երկրի վրա եղող բոլոր սերմերը.

32 իսկ երբ սերմանվի, բուսնում և լինում է ավելի մեծ, քան ամեն տունի, և արձակում է մեծ ձյուղեր, այնքան, որ երկրնքի թռչունները նրա հովանու տակ կարող են բնակվել»:

Սա վերջին առակն է այն շարքի, որն սկսվեց սերմնացանի առակով (Մարկ. Դ 1—9): Ինչպես նախորդը, սա ևս ուղղված է ժողովրդին:

Մարդ գրեթե փորձվում է ասել, թե Հիսուսի երևակայությունն սկսում է սպառվել: Չորս առակներ պատմվեցին արդեն, և նա կարծես դժվարանում է հնարել մի հինգերորդը: Նա հրավիրում է իր ունկնդիրներին, որպեսզի փնտրեն իր հետ, գուցե նաև որպեսզի փորձի Աստուծո թագավորության մասին նրանց ունեցած հապացողությունը:

Սակայն, ոչ ավելի, քան մյուս առակները, այս առակը նույնպես Աստուծո թագավորության մասին հստակ մի սահմանում չի տալիս: Այն վեր է հանում միայն նրա բազմազան կողմերից մեկը, որը բավականին մոտ է նախորդ առակի մեջ արտահայտվածին. դա այն է, որ Աստուծո թագավորու-

թյունը մի մեծ հակադրություն է ներկայացնում: Հիսուս նրա մեջ տեսնում է փոքրություն և մեծություն, պատկերը մանրագույն մի հատիկի, որը ծնունդ է տալիս մի մեծ տունկի՝ թելադրելով այն միտքը, որ դա միևնույն իրականությունն է, որ սկսվում է փոքրից և այնուհետև դառնում է անհամեմատ ավելի մեծ:

Մեկնաբանությունների մի ամբողջ շարք կարելի է կատարել ըստ այն տեղի, որտեղ ունկնդիրը տեղադրում է ծրարական և աճման ընթացքը: Դա մարդու սիրտը չէ՝ արդյոք, որտեղ խոսքը ծիլ է արձակում և մեծանում, ինչպես հատիկը՝ սերմանված հողի մեջ: Եվ կամ աշխարհը չէ՝ արդյոք, որին Աստուծո Թագավորությունը երևում է խիստ խորհրդապահորեն այն պահին, երբ խոսում է Հիսուս, բայց հետագայում այն պիտի երևա շատ ավելի ակնբախ կերպով: Հակադրությունը մեծության և փոքրության միջև կարող է արտահայտվել բազում ձևերով: Գուցե հարկավոր չէ ձգտել անպայման մի տեղ դնել այն, այնքանով, որքանով Աստուծո Թագավորությունը մնում է ամբողջական մի իրականություն:

28. ՎԵՐՋ ԱՌԱԿԱՎՈՐ ՔԱՐՈՉՈՒԹՅԱՆ
(Մարկ. Դ 33—34)

- Դ 33 Եվ այդպիսի առակներով էր նրանց ասում խոսքը, որ կարողանային լսել:
34 Եվ առանց առակի նրանց ոչինչ չէր ասում, բայց իր աշակերտներին առանձին ամեն ինչ մեկնում էր:

Ավետարանիչը ամփոփում է Հիսուսի արտասանած խոսքերը, որոնք հաճախ կոչվել են «առակավոր քարոզ»: Ինչպես տեսանք,

այդ խոսքերը չեն վերաբերում միայն մի քարոզի, քանի որ դրանց հասցեատերերը մերթ աշակերտներն են եղել ու մերթ անանուն ամբոխը, և արտասանված խոսքերի բովանդակությունն էլ եղել է տարբեր. Հիսուս առակներ է ասել, տվել է դրանց մեկնությունը և բացատրել, թե ինչու ինքը տարբեր լեզու է գործածել իր աշակերտների համար և տարբեր՝ «դրսի մարդկանց համար»:

Այս վերջին կետին է ակնարկում Մարկոսը, երբ տալիս է քարոզի եզրակացությունը: Հիսուս իր խոսքն ուղղում էր ժողովրդին բազում «այդպիսի առակներով», առակներ, որոնց ծանոթացավ ընթերցողը, բայց նաև այլ առակներ, որ ավետարանիչը գրի չի առել:

Ըստ սուրբ Մարկոսի, դա միակ լեզուն էր, որ միջին ունկնդիրը կարող էր հասկանալ, քարոզի այն միակ տիպը, որ կարող էր հասանելի լինել նրան: Մարկոսն այստեղ նվազ խիստ է թվում, քան եղել էր նախապես, երբ Եսայի մարգարեից մեջբերումներ էր կատարում՝ բացատրելու համար, թե հարկավոր էր «դրսի մարդկանց» պահել իրենց անհասկացողության մեջ (Մարկ. Դ 10—12): Այժմ առակներն այլևս չեն ներկայացված որպես դիտավորյալ կերպով գործածված մի մույթ լեզու, այլ, ավելի շուտ, որպես այն միակ լեզուն, որը կարող էր մատչելի լինել չտարբերակված բազմություններին:

Մնում է, որ շարունակվի աշակերտների նկատմամբ ցույց տրվող առանձնակի վերաբերմունքը: Հիսուս նրանց ամբողջապես մասնակից է դարձնում ավետարանական քարոզության ճակատագրին:

(Շարունակելի)